



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ՄՈՆԹԵՊԵՐԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՉ

Կիրակի, Սեպտեմբեր 14-ին, հայ եկեղեցին պիտի յիշատակէ Խաչվերացի տօնը, որ միաժամանակ անուանակոչութեան տօնն է Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ եւ պիտի պատգամէ խաչին խորհուրդին մասին:

Յաւարտ Ս. Պատարագի, ներկայ հաւատացեալները, Առաջնորդ Սրբազանին եւ հոգեւոր հայրերուն առաջնորդութեամբ, պիտի ուղղուին «Բաղրամեան» սրահ, ուր պիտի կատարուի մատաղօրհներ:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան անդամներէն՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Կրդ. Զիֆթճեան, որ հիւրաբար շրջանս կը գտնուի:

Զուլորատոյի եւ Ռաքի Մաունթըն շրջանի ծխական մեր շրջանի հաւատացեալներուն համար, Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկեան:

Մուսա Լերան հերոսամարտի 93-րդ տարեդարձին առիթով, այսօր, «Թեմի Արեւ»-ի մէջ յիշատակի պատարագ պիտի մատուցուի: Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինութեամբ, Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Արժ. Տ. Խորէն Ա. Քիւն. Հապէշեան: Պատարագէն ետք պիտի կատարուի հերիսայի աւանդական օրհնութիւն եւ խրախճանք:

PRELATE TO CELEBRATE THE FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS AT HOLY CROSS CATHEDRAL

Sunday, September 14 is the Feast of the Exaltation of the Holy Cross, the last of the five major feast days of the Armenian Apostolic Church. It is also the name day of Holy Cross Cathedral in Montebello.

On these occasions H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of *madagh* at Holy Cross Cathedral.

By the ordinance of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Trinity Church in Fresno, and Very Rev. Fr. Barthev Gulumian at the Armenian Apostolic Church of Colorado and the Rocky Mountain Region.

The 93rd Anniversary of the battle of Musa Dagh will also be commemorated on this day with Divine Liturgy and the blessing of Herissa by Archpriest Dr. Khoren Habeshian at Camp Arev.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱ ՄԻՐԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 10 Սեպտեմբերի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց «Հայաստան»

Համահայկական Հիմնադրամի Լուս Անճելըսի գործադիր տնօրեն Տիկին Մարիա Միհրանեանի այցելութիւնը: Տիկին Միհրանեան Ազգային Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանին զեկուցելու Հիմնադրամի աշխատանքներուն մասին՝ ընդհանրապէս, ու մասնաւորաբար յառաջիկայ Նոյեմբերին նախատեսուած տարեկան թելեթոնին ծրագիրներուն առնչութեամբ:

Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ կարգ մը անմիջական հարցեր, որոնք քննարկելի են Հիմնադրամի գործադիր վարչութեան յառաջիկայ 16 Սեպտեմբերի նիստին: Նշենք, որ Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Տիար Միտր Տէր Յովհաննեսեան ներկայ պիտի ըլլայ ժողովին:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց լուսաբանութեանց համար ու բարձր գնահատեց համահայկական այս կազմակերպութեան հայրենասնուէր ծառայութիւնները:



ARMENIA FUND CHAIR MARIA MEHRANIAN VISITS THE PRELACY

On the morning of Wednesday, September 10th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chair of Armenia Fund U.S. Western Region Mrs. Maria Mehranian to the Prelacy.

Mrs. Mehranian met with the Prelate to discuss the current projects and activities of Armenia Fund, specifically the upcoming annual Telethon which will take place in November. They also discussed a number of key issues which

are to be examined in more detail at the next corporate board meeting on September 16th, which Executive Council representative Mr. Meher Der Ohanessian will attend.

The Prelate thanked Mrs. Mehranian for the update and praised the active participation of the organization in the progress of the Armenian homeland.

ԹՈՒՐԷԻՈՅ ՄԷՋ ՄԱՅԱՑՈՒ ԱՐԿԱՇԻՆ ԱՌԻԹՈՎ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ՅՂԵՑ ԻՐԱՆԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 9 Սեպտեմբերի առաւօտուն, Թուրքիոյ արեւելեան շրջանին մէջ, Իրանի սահմանին մօտ տեղի ունեցած աղետալի արկածին առիթով, որուն զոհ գացին Պարսկաստանի մեր երեք թեմերէն ազգայիններ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ցաւակցական գիրեր յղեց երեք Թեմերու Առաջնորդներուն՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի, Նշան Եպսկ. Թօփուզեանի եւ Բաբգէն Եպսկ. Չարեանի:

Իր նամակին մէջ, Առաջնորդ Սրբազանը, յանուն թեմիս հոգեւոր դասուն ու ժողովականութեան կը ցաւակցի Առաջնորդ Սրբազաններուն ու զոհերու ընտանեկան պարագաներուն, աւելցնելով. «Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ զոհերուն հոգիները ընդունի երկնային արքայութեան մէջ, անոնց ընտանքիներուն ընծայէ Ս. Հոգւոյ մխիթարութիւնը, իսկ վիրաւորներուն ցաւերը ամոքէ՝ պարգեւելով շուտափոյթ ապաքինում»:

PRELATE CONVEYS HIS CONDOLENCES TO THE THREE PRELATES OF IRAN FOLLOWING TURKEY BUS CRASH

On the morning of Tuesday, September 9th, a bus crash in Eastern turkey claimed the lives of sixteen Armenian tourists and resulted in the injury of dozens more. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a letter of condolence to the three Prelates of Iran, H.E. Archbishop Sebouh Sarkissian, H.G. Nshan Topouzian, and H.E. Papken Tcharian expressing his sympathy on the loss of their parishioners.

In his letter sent on behalf of Prelacy clergy and councils, the Prelate conveyed his condolences to the victims' families stating, "We pray for God to accept the souls of the victims in His heavenly abode, for the Holy Spirit to comfort the families who are mourning their loss, and for the speedy recovery of those who were injured in this tragedy."

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՐԿՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ
ԿԱՏԱՐԵԼՈՎ

**ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԱՑՈՂ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ
ՄԵԶԻ ՀԵՏ ԵՆ ԲՈԼՈՐ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐՈՒՆ**

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

«Ազգային Առաջնորդարանիս նոր շէնքի բարերարները միշտ մեզի հետ են եղած ու մեր առաքելութեան իրենց զօրակցութիւնը գործնապէս արտայայտած են այս կառոյցի իրագործման բոլոր կարելոր հանգրուաններուն, սկսելով հիմնօրհնէքէն, անցնելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ձեռամբ տեղի ունեցած օրհնութեան արարողութենէն, մինչեւ Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական բացումը: Մեր բարերարներուն ու մեր ժողովուրդի նուիրաբերող զաւակներուն կը պարտինք այս իրագործումը», յայտարարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Շաբաթ, 6 Սեպտեմբերի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ տեղի ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին, անգամ մը եւս երախտագիտութիւն արտայայտելով ազգային այս հաստատութեան բոլոր զօրակիցներուն եւ գլխաւոր բարերարներուն:



Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ այս շէնքի ծրագիրին իրականացման հանգրուանը թելակոխելէ առաջ իսկ, անհատ բարերարներ ու ազգայիններ մասնակից դարձած էին Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի հիմնադրամին մարմնաւորման:

Զօրակցական արտայայտութիւնները չփակուեցան նոր շէնքի պաշտօնական բացումէն՝ 6 Մայիս 2007էն ետք, այլ Առաջնորդարանս ունեցաւ նոր բարերարներ: Անոնց շարքին են Տոքթ. Արմէն Գասապեան, Օր. Աստղիկ Թէօյլեան, Տէր եւ Տիկին Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեան եւ Տէր եւ Տիկին Յովիկ եւ Սեդա Աղայեան: Առաջինը հովանաւորեց Ազգ. Առաջնորդարանի հաշուապահական բաժանմունքի գրասենեակը, ի յիշատակ իր մօրեղբօր՝ Յարութ Նշան Գազանճեանի, Օր.

Աստղիկ Թէօյլեան հովանաւորեց Ըրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի գրասենեակը, ի պատիւ իր մօր՝ Պերճուհի Գրիգորեանի, իսկ Պոյաճեան եւ Աղայեան ընտանիքները հովանաւորեցին յաջորդաբար՝ խորհրդատունն ու արխիւատունը: Ան այս առիթով աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի օրհնէ այս ու բոլոր բարերարները ու վարձահատոյց ըլլայ անոնց:

Առաջնորդ Սրբազանին աղօթակից էին Տ. Կոմիտաս Բնյ. Թորոսեան եւ Աշոտ Բնյ. Գամպուրեան: Ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներէն

Տիար Կարո Էշկիեան, ազգ. բարերար Տեր եւ Տիկին Ժան եւ Աստղիկ Պետրոսեան ամուլը, Պետրոսեան, Գասապեան, Զեօյլեան եւ Գրիգորեան ընտանիքներու անդամներ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Ծանոթակ Մարմինի եւ անձնակազմի անդամներ:

Մատրան մէջ տեղի ունեցած արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը, բարերար ընտանիքներուն հետ միասին, աղօթքով կատարեց բացումը Քրիստոնեական Դաստիարակութեան ու Հաշուապահական գրասենեակներուն, բարերարներուն հետ կտրելով ժապաւենները: Նշենք, որ խորհրդատան եւ արխիւատան օրհնութիւնը տեղի պիտի ունենայ մօտիկ ապագային:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն. բարերար ընտանիքներու անդամները յիշատակի լուսանկարներ ունեցան Առաջնորդ Սրբազանին հետ:

BLESSING OF TWO PRELACY OFFICES

On the afternoon of Saturday, September 6th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the blessing of two offices at the Prelacy headquarters. The ceremony began with a prayer service in the “St. Dertad and St. Ashkhen” Chapel, during which the Prelate asserted that the sponsors of the headquarters have remained faithful throughout all the phases of the construction of the new building, from the blessing of the foundation by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, to the official opening ceremony. He then once again expressed his gratitude to all the supporters and grand benefactors of the Prelacy.



The Prelate emphasized that the support of the sponsors continues long after the official opening in May of 2007, which is evidenced by recent sponsorships by Dr. Armen Kassabian (Accounting Department, in memory of his uncle Harout Neshan Kazandjian), Ms. Asdghig Keuylian (Christian Education Department, in honor of her mother Mrs. Berjouhi Krikorian), Mr. and Mrs. Hovsep and Elizabeth Boyajian (Vestry), and Mr. and Mrs. Hovig and Seta Aghaian (Archives Department).

At the conclusion of the Chapel service, the Prelate blessed the Christian Education and Accounting Department offices, which culminated in the cutting of the ribbons by the sponsors. The blessing and official opening of the Vestry and Archives office will take place in the near future.

Also participating in the ceremony were Rev. Fr. Gomidas Torossian and Rev. Fr. Ashod Kambourian. Executive Council member Mr. Garo Eshgian, benefactors Mr. and Mrs. John and Asdghig Bedrosian, and members of the

Bedrosian, Kassabian, Keuylian, Krikorian families, as well as the Ladies Auxiliary and staff were also in attendance.

A reception followed the ceremony.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ԳՆԱՅԱՏԵ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱՎԱՐ ՓՐՈՖ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՃԵԱՆԸ

Կիրակի, Սեպտեմբեր 14-ին, երեկոյեան ժամը 6-ին, մեծարանքի յատուկ ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Presbyterian եկեղեցւոյ մէջ, ի պատիւ Հայաստանի պետական ակադեմական երգչախումբի գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր խմբավար՝ Փրոֆ. Յովհաննէս Չեքիճեանի: Ձեռնարկին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն համայնքի արուեստագետներ եւ Արարատ երգչախումբը, ղեկավարութեամբ՝ խմբավար Ալենուշ Եղնազարի:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքը եւ օրհնութիւնը պիտի փոխանցէ մեծարեալին: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

PRELATE TO CONVEY HIS BLESSING TO MAESTRO HOVHANNES TCHEKIDJIAN

On the evening of Sunday, September 14th, Maestro Hovhannes Tchekidjian, permanent director and chief conductor of the State Academic Choir of Armenia will be honored at an event to take place at Glendale Presbyterian Church. Various artists as well as the Ararat Choir, under the direction of Alenoush Yeghnazar, will perform at the event.

The Prelate will convey his commendation and blessings to Maestro Tchekidjian. Rev. Fr. Ardag Demirjian will also be in attendance.